



Երևան, ապրիլի 28, 2012

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ

«Արմնյուզ» լրատվական հեռուստաալիքի նախաձեռնությամբ եւ ֆինանսավորմամբ իրականացվել է հանրային կարծիքի ուսումնասիրման ընդգրկուն ծրագիր: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել և վերլուծել Հայաստանի բնակչության բազմազան-հասարակական սրամադրությունները և կարծիքները, հետևել 2012-ի խորհրդարանի և 2013-ի նախագահի ընտրությունների ընտրական նախասիրությունների գինամիկային: Ծրագիրը իրականացնում են Հայաստանի Սոցիոլոգիական Ասոցիացիան և The Gallup Organization-ը, 2012-ի ապրիլից մինչև 2013-ի փետրվար:

ԱՌԱՋԻՆ համապետական ներկայացուցչական հանրային կարծիքի հարցումն անցկացվել է 2012-ի ապրիլի 4-ից 10-ը, իսկ արդյունքները ներկայացվել են ապրիլի 17-ին:

ԵՐԿՐՈՐԴ և վերջնական համապետական ներկայացուցչական հանրային կարծիքի հարցումն անցկացվել է 2012-ի ապրիլի 16-ից 22-ը:

Այս հարցմանը մասնակցել է համապետական ընտրություններում ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի 1,015 չափահաս բնակիչ: Հարցազրույցներն անցկացվել են ընտրողի տանը՝ դեմ առ դեմ հարցման մեթոդով:

Արձագանքների մակարդակը կազմել է 66%, սխալման լուսանցքը չի գերազանցում + /- 3,1%, վստահության մակարդակը՝ 95%:

Երկրորդ ու վերջնական հարցումը նախատեսված էր ԱԺ ընտրությունների պաշտոնական ֆարգաբաժնի ընթացքում, ինչը բույլ կտար չափել համամասնական ընտրակարգով գրանցված բոլոր կուսակցությունների ունեցած աջակցության մակարդակը նախընտրական արժանիքում:

Երկրորդ հարցման արդյունքները ցույց տվեցին, որ խորհրդարանական ընտրություններից երկու շաբաթ առաջ առավել մեծ աջակցություն են վայելում երկու կուսակցություն՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը», որին պատրաստ էր ձայն տալ գրանցված ընտրողների 39%-ը (առաջին հարցման համեմատ 5%-ով ավել) կամ հավանական ընտրողների 42%-ը (առաջին հարցման համեմատ 4%-ով ավել), և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որի օգտին պատրաստ էր փվեարկել գրանցված ընտրողների 26%-ը (առաջին հարցման համեմատ 2%-ով պակաս) կամ հավանական ընտրողների 28%-ը (առաջին հարցման համեմատ 2%-ով պակաս):

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երեք այլ կուսակցություններ, որոնք վայելում են ընտրողների համեմատաբար ավելի փոքր մասնաբաժնի աջակցությունը, գրեթե վատահարաբ կարող են անցնել Ազգային ժողով («Հայ Ազգային Կոնգրես», «Օրինաց Երկիր», «Հայ Հեղափոխական Դաշնակցություն»): «Ժառանգություն» կուսակցությունը նույնպես «տատանվում է» անցողիկ շեմին – ընտրաբաժնի ավարտական երկու շաբաթը ազդեցություն կունեն նրանց վերջնական արդյունքի վրա ընտրությունների օրը: Հարցման արդյունքների վերլուծությունը հաստատում է առաջին հարցման սվյալները, որոնց համաձայն երկու առաջատար կուսակցությունների սոցիալ-ժողովրդագրական պատկերը բավական նման է, և այդ երկուսը հիմնականում մրցում են միմյանց հետ: Հավանական ընտրողների մի զգալի մասը կողմնորոշված է, թե ում չի ընտրելու, բայց իրենց վերջնական ընտրության ձևավորման համար դեռ կա ժամանակ, և նրանք դիտարկում են տարբերակներ:

Gallup-ի ներկայացուցիչ, դոկտոր Ռասա Ալիբաուսկիենեն նշում է, որ ընտրաբաժնի սկզբից հայ ընտրողները բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում գալիք ընտրությունների հանդեպ: Նրանց 66%-ն ասել է, որ հաստատ ընտրելու է (առաջին հարցման համեմատ 8%-ով ավել) և 23%-ը նշել է, որ «հավանաբար կընտրի» (առաջին հարցման համեմատ 7%-ով պակաս): Պետք է հիշել, որ ազգային հարցմանը մասնակցում են միայն այն ֆալաֆացիները, որոնք փաստացի սվյալ պահին գտնվում են երկրում, մինչդեռ ընտրողների ցուցակներում ընդգրկված են նաև նրանք, ովքեր երկրից դուրս են գտնվում: Դիցուկ՝ բարձր միգրացիոն վարկանիշ ունեցող երկրներում, ինչպիսին է Հայաստանը, ընտրություններին մասնակցողների վերջնական

թվաճանաչող սովորաբար ավելի ցածր է լինում, քան սոցիոլոգիական հարցման տվյալները (առանց միգրանտների):

Հեռուստատեսությունը մնում է ֆազաբանական ինֆորմացիայի կարևորագույն աղբյուրը ընտրաբեռավի ժամանակ և նրա հետ մեկտեղ նաև ինտերնետը և «բանավոր խոսքը»:

ՀՍԱ ներկայացուցիչ, դոկտոր Գևորգ Պողոսյանը մեկնաբանեց հարցման արդյունքները. «Երկրորդ հարցման արդյունքները հաստատեցին, որ հայ ժողովուրդը ցուցաբերում է ընգծված եվրոպական կողմնորոշում, և հարցվածների 69%-ը նշեց, որ Հայաստանն ապագայում պետք է անդամակցի Եվրոպական միությանը: Միաժամանակ մեր ժողովուրդը ցանկանում է զարգացնել լավ հարաբերություններ և համագործակցություն ԱՊՀ գործընկերների հետ (հարցվածների 80%-ը ցանկանում է, որ Հայաստանը մնա ԱՊՀ կազմում)»:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչության համար ամենակարևորը շարունակում են մնալ սոցիալ- տնտեսական խնդիրները, որոնցից առաջնայինը աշխատատեղերն ու կյանքի պայմաններն են:

Ծրագիրն իրականացնում է «Արմեյոլզ» հեռուստաընկերությունը՝ Baltic Surveys /The Gallup Organization-ի և ՀՍԱ-ի հետ համատեղ, քանի որ Gallup-ը համաշխարհային հեղինակավոր և հանաչված ընկերություն է և Baltic Surveys/The Gallup Organization-ը ամենավերջինն է, որը Հայաստանում աշխատում է 2005-ից մինչև այսօր՝ ՀՍԱ-ի հետ իրականացնելով 13 ծրագիր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏՆ ՈՒ ԹՎԵՐԸ՝

www.asa.sci.am և <http://eu.gallup.com>

ԿԱՅՔԵՐՈՒՄ

Ծրագրի ղեկավարներ.

Արտակ Ալեքսանյան, «Արմնյուզ» հեռուստաընկերություն

(www.armnews.am)

«Արմնյուզը» հիմնադրվել է 2011 թվականին և հեռարձակման լիցենզիա ստացել 2003 թվականին: Մինչև 2011 թվականը «Արմնյուզ» հեռուստաընկերությունը հիմնականում վերահեռարձակել է «Նվրանյուզ» եվրոպական հեռուստաալիքը՝ դրանք ընդհատելով սեփական արտադրության հարստացումներով: 2011 թվականի սեպտեմբերից «Արմնյուզը» սկսեց իր նոր եթերաշրջանը՝ հայտ ներկայացնելով դառնալու Հայաստանի առաջին ու առայժմ միակ 24-ժամյա լրատվական հեռուստաալիքը:

Դոկտոր Ռասա Ալիբաուսկիենե, Baltic Surveys/The Gallup Organization

(www.gallup.com)

Gallup-ը (The Gallup Organization) հանրային կարծիքի հարցումների և խորհրդակցության համաշխարհային առաջատար կազմակերպություններից է, ժամանակակից հանրային հարցման ծառայության ոլորտի «հիմնադիր հայրերից» մեկը: Դոկտոր Ջորջ Գեյլափն այն հիմնել է ԱՄՆ-ում, 1935-ին: Այն վերանել է միջազգային առաջատար ընկերության (www.gallup.com):

“Baltic Surveys”-ը Gallup-ի մաս է, առաջին մասնավոր, անկախ, հանրային կարծիքի ուսումնասիրման ընկերությունն է Լիտվայում, որը հիմնադրվել է 1992-ի ապրիլին, որպես Gallup-ի Լիտվայի գրասենյակ: Այն ESOMAR-ի, ԱՄՆ-ի առևտրային պալատի, Բրիտանական առևտրային պալատի, IAPC-ի և այլ միջազգային կազմակերպությունների անդամ է:

Baltic Surveys / The Gallup Organization-ը 20 տարի իրականացրել է հանրային կարծիքի հարցումներ և շուկայի վերլուծության ծրագրեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում (Հայաստան, Բելոռուս, Մոլդովա, Ղազախստան, Ղրղզստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Ռուսաստան): Ընկերությունը ներկայացված է ESOMAR-ում (Ռ. Ալիբաուսկիենե անդամ է 1992-ից):

Դոկտոր Ռասա Ալիբաուսկիենե հանդիսանում է Gallup Europe-ի խորհրդի անդամ:

Դոկտոր Գևորգ Պողոսյան, Հայաստանի սոցիոլոգիական ասոցիացիա (www.asa.sci.am)

Հիմնադրվելով 1992-ին՝ ՀՄԱ-ն Հայաստանի հետազոտական առաջին և առաջատար կազմակերպություններից է: ՀՄԱ-ն Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի (ISA) և Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի (ESA) ազգային և ESOMAR անդամ է:

ՀՄԱ-ն արդեն 20 տարի զբաղվում է հանրային կարծիքի ուսումնասիրությամբ և իրականացնում է սոցիոլոգիական հարցումներ տարբեր բնագավառներում՝ սոցիոլոգիական հետազոտություն, հանրային կարծիքի հարցում, փվեարկության օրվա ելքի հարցում (“exit poll”), շուկայի ուսումնասիրություն, ՋԼՄ հարցումներ, բանակական ու որակական հետազոտություններ: Գևորգ Պողոսյանը սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր է և հանդիսանում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի թղթակից անդամ: